ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

BookMark

ԼՈՍԻՑ ԵԿՈՂ ԿԱ՞

BookMark

ՄԻՆԱՍՅԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Միհրան Գալստյան, Նարե Գալստյան

ԼՈՍԻՑ ԵԿՈՂ ԿԱ՞

Հայրենադարձման խնդիրներն ու հնարավորությունները Լոս Անջելեսի հայկական համայնքում

BookMark

new mag

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 314/316
ԳՄԴ 60.5
Գ 206

Միհրան Գալստյան, Նարե Գալստյան
Գ 206 Լոսից եկող կա՞: Հայրենադարձման խնդիրներն ու հնարավորությունները Լոս Անջելեսի հայկական համայնքում / Մ. Գալստյան, Ն. Գալստյան.- Եր.: Newmag, 2023.- 272 էջ:

ՀՀ-ում նորից կապրի՞ առնվազն 3.5 միլիոն մարդ: Բնակչության արտահոսքը՝ աշխատանքային, սոցիալական, կրթական այլ տիպի միգրացիան, որը հաճախ բնորոշվում է որպես արտագաղթ, անխուսափելի գործընթաց է: Հանրապետության բնակչության բնական աճն էլ դանդաղում է տնտեսական ու քաղաքական ճգնաժամերի, պատերազմի պատճառով: Լուծումը ներգաղթն է, լավագույն տարբերակը՝ հայրենադարձությունը: Հնարավո՞ր է հայերի զանգվածային վերադարձ Հայաստան, ինչպես դա մի քանի անգամ եղավ 20-րդ դարում:

Սոցիոլոգներ Միհրան և Նարե Գալստյաններն ուսումնասիրել են վերջին տասնամյակների մի բարդագույն խնդիր և փորձել պատասխանել մի կարևոր հարցի՝ հայկական սփյուռքի ամենամեծ համայնքներից մեկի՝ Լոս Անջելեսի (Կալիֆոռնիա, ԱՄՆ) և դրա արվարձանների ամերիկահայերը մշտական բնակության համար կգա՞ն Հայաստան ու ի՞նչ պայմաններով:

Արվել է համապարփակ սոցիոլոգիական հետազոտություն, գիտնականները զրուցել են հենց լոսանջելեսահայերի հետ, հարցումները շարունակել տարբեր երկրներից Հայաստան ներգաղթածների շրջանում, քննության առել հայրենադարձության բոլոր շերտերը՝ օրենսդրականից մինչև կառավարչական, և ներկայացրել իրենց եզրահանգումն ու գործնական առաջարկները:

Գիրքը տպագրության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտխորհուրդը:

ՀՏԴ 314/316
ԳՄԴ 60.5

ISBN 978-9939-884-99-8
Միհրան Գալստյան, Նարե Գալստյան «Լոսից եկող կա՞» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին և «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամին:

ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՄԻՆԱՍՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գիրքը հրատարակվել է «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամի «Վերաիմաստավորելով 20-րդ դարի հայոց պատմությունը» պատմագիտական դրամաշնորհով:

«Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամը ստեղծվել է 2018 թվականի փետրվարին՝ անվանի ճարտարապետ, պետական և հասարակական գործիչ Գրիգոր Հասրաթյանի և անվանի գիտնական, քաղաքագետ, պետական գործիչ Միքայել Մինասյանի հիշատակին:

Հիմնադրամի «Մինասյան» մատենաշարն աջակցում է պատմագիտական, հետազոտական նախագծերին, որոնք հնարավորություն են տալիս վերաիմաստավորել 20-րդ դարի Հայաստանի պատմությունը:

BookMark

Բովանդակություն

Ներածություն 11
Գլուխ առաջին Ինչ է սփյուռքը 17
Գլուխ երկրորդ Հայրենադարձության միջազգային փորձը ... 45
Գլուխ երրորդ Հայրենադարձության Հայաստանի փորձը ... 75
Գլուխ չորրորդ Լոսանջելեսահայերը 117
Գլուխ հինգերորդ Հայրենադարձության «վանող» և «ձգող» գործոնները 167
Եզրակացություն 207
Ինչպես է ստեղծվել գիրքը 217
Հավելված 1 223
Հավելված 2 233
Գրականության ցանկ 236
Լուսանկարների հեղինակներ 253
Ծանոթագրություններ 255

Bookmark

Ներածություն

Դեմոգրաֆիան այսօր որոշում է ամեն ինչ, ձևավորում է սպառողական շուկաներ, ընտրական ձայներ, նոր ռեգիոններ ու նույնիսկ երկրներ: Եթե ձերոնք շատ են, չեն կարող հաշվի չնստել քեզ հետ: Այդ առումով Հայաստանը դեմոգրաֆիական աղետի մեջ է. մեր երկրի բնակչությունը վերջին 30 տարում միայն պակասում է: Դրա պատճառները տարբեր են՝ պատերազմ ու համավարակ, բնակչության ծերացում, ծնելիության անկում և արտագաղթ:

Վիճակը շտկելու ամենակարճ ուղին ներգաղթն է: 20-րդ դարում սփյուռքահայերի ներգաղթի մի քանի ալիքներն էականորեն փոխեցին Խորհրդային Հայաստանի դեմոգրաֆիական պատկերը և երկրի դեմքը: Հենց այդ փորձին են շատերն այսօր հղում անում՝ խոսելով ներգաղթի մասին:

Այսօր հնարավո՞ր է ներգաղթ: Դա մշակված նպատակ է, թե՞ ուղղակի ցանկություն, որը ժամանակ առ ժամանակ հնչում է տարբեր հարթակներից, ինչպես ժամանակին խոսում էին երկիրը ծիրանով ու հանքային ջրերով պահելու մասին:

Այս գիրքը պատասխանում է ընդամենը մեկ հարցի՝ հնարավո՞ր է ներգաղթ Լոս Անջելեսից: Նրանք, ովքեր գնացին ամերիկյան երազանքի հետևից, պատրա՞ստ են իրենց երազանքը շարունակել հայրենիքում:

Սփյուռք ունեցող երկրների մի մասը հայրենադարձության քաղաքականությունը կառուցում է այնպես, որ շահավետ լինի և՛ վերադարձողի, և՛ երկրի համար: Երկրների մի մասն

էլ ներգաղթը չի դիտարկում որպես մշտական գործոն և սփյուռքի ներուժն օգտագործում է ժամանակավոր ծրագրերի համար:

Հայրենադարձության վերաբերյալ Հայաստանի պատմական և ժամանակակից քաղաքականության հիմքում էթնիկ հայերի վերադարձի խնդիրն է, որը քաղաքական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և ազգային անվտանգության առումով համարվել է երկրի հզորացմանը նպաստող գործոն:

Սփյուռքն էլ Հայաստանը դիտարկում է որպես մշտական վերադարձի երկիր, թեև խնդրահարույց հարցերը շատ են.

- սփյուռքի ինքնությունը փոխվել է,
- սփյուռքի պատմական հայրենիքը և դրա մի մասում ստեղծված պետությունը նույնն են,
- Հայաստանը սփյուռքի ինքնության ձևավորման հիմքն է,
- Հայաստանը որ խմբերի համար հայրենիք չէ:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ հայրենադարձության վերաբերյալ ուսումնասիրություններում հաշվի չեն առնում, որ սփյուռքը հետերոգեն չէ: Հայկականում էլ համակողմանի ուսումնասիրված չէ սփյուռքի համար «հայրենիք» դառնալու և, ի վերջո, ներգաղթ կազմակերպելու գործում Հայաստանի ներուժը:

Այս գրքում քննարկվում է հայրենադարձության խնդիրը՝ հաշվի առնելով, որ այսօր մեր սփյուռքը միատարր չէ: Այդ պատճառով հնարավոր վերադարձողների խնդիրները վերլուծել ենք՝ հաշվի առնելով ավանդական և ժամանակակից

սփյուռք հասկացությունները, նրանց ենթաէթնիկ ու սեռատարիքային կազմը, անհատների բազմամշակութայնության ու բազմինքնության հանգամանքները:

Լոս Անջելեսն ընտրել ենք, քանի որ հայկական սփյուռքի ամենամեծ համայնքն է: Այն կարծես հայկական սփյուռքի միկրոմոդելն է: Այնտեղ հաստատված հայերի միգրացիոն խմբերը տարբեր են ըստ ծագման երկրների և բնակության ժամկետների: Այդ հայերի ենթաէթնիկ խմբերը բազմազան են նաև լեզվով, սովորույթներով, կենցաղամշակութային և կրոնական վարքագծով: Լոս Անջելեսում են, ավանդական սփյուռքը և նորը, այնտեղ են ապրում ԱՄՆ-ում ծնված երրորդ, չորրորդ սերնդի ամերիկահայերը: Այդ ամենը հնարավորություն է տալիս Լոս Անջելեսի օրինակի ուսումնասիրությամբ բացահայտել սփյուռքյան իրողությունների բազմազանությունը և հայրենադարձության խնդրում նրանց դիրքորոշումները:

Հետազոտությունը հիմնականում ուղղված է Լոս Անջելեսի հայության շրջանում խնդիրները և հնարավորությունները բացահայտելուն, թեև փորձագետների և հայրենադարձների առավել լայն շրջանակ է ընտրվել: Փորձագետները կարծիք են հայտնել ոչ միայն լոսանջելեսահայության, այլև ընդհանուր սփյուռքի վերաբերյալ: Այս մոտեցումը հնարավորություն է տվել ապահովել կարծիքների բազմազանություն ոչ միայն Լոս Անջելեսի համայնքի, այլև ամբողջ սփյուռքի վերաբերյալ, ընդլայնվել են համեմատական շրջանակները: Հայաստանում հարցազրույցները չեն սահմանափակվել միայն ամերիկահայերով, ընդգրկվել են տարբեր երկրներից տեղափոխված հայեր: Այդ մոտեցմամբ փորձել ենք բացահայտել

Հայաստան ներգաղթած հայրենադարձների տարբեր խմբերի ընդհանուր և առանձին խնդիրները:

Այս ուսումնասիրությամբ ներկայացնում ենք հայրենադարձության միջազգային և հայկական փորձի, սփյուռքի ինքնության բազմաշերտության, ներգաղթի «վանող» և «ձգող» պայմանների համակողմանի վերլուծությունը, եզրակացությունը և առաջարկները: Մեր նպատակն է հայրենադարձություն երևույթն ուսումնասիրել հայկական սփյուռքում տեղի ունեցող սոցիալ-մշակութային գործընթացների համատեքստում և նոր մոտեցումներ ու առաջարկներ ուրվագծել այդ հիմնախնդրի վերաբերյալ:

Հետազոտման գլխավոր հարցն է՝ ինչո՞վ է պայմանավորված հայրենադարձությունը, ի՞նչ գործոններ են նպաստում դրան և խոչընդոտում:

Հետազոտության ժամանակ ուսումնասիրվել է հայրենադարձության երկու տիպի խնդիր.

Առաջին. Հայաստանի խնդիրները

- քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակի ազդեցությունը հայրենադարձության վրա,
- մշակութային գործոնը և ադապտացիան,
- օրենսդրական դաշտի բացերը,
- ինստիտուցիոնալ կառույցների գործունեությունը,
- հայրենադարձների խնդիրները:

Երկրորդ. Սփյուռքի խնդիրները

- Հայրենադարձության մոտիվները դասական և նոր սփյուռքի սերունդների ու տարբեր ենթաէթնիկ խմբերի շրջանում,
- սփյուռքում նոր սոցիալ-մշակութային գործընթացների (բազմալեզվություն, բազմամշակութայնություն և այլն) կապը հայրենադարձության հետ,
- ինքնության մասին պատկերացումները,
- հայրենիք-պետություն մոտեցումները սփյուռքի սերունդների և ենթաէթնիկ խմբերի շրջանում:

Այս հետազոտությամբ և այս գրքով կփորձենք պատասխանել հետևյալ հարցին. ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելեսի հայերից ովքեր և ո՞ր դեպքում կվերադառնան կամ կգան Հայաստան՝ ապրելու: Այս միկրոպատասխանը հնարավոր կլինի կիրառել նաև մակրոմակարդակում: Եվ կփորձենք ոչ թե ցանկություններից դրդված կամ անցյալի փորձով, այլ գիտական մակարդակով պատասխանել մի կարևոր հարցի՝ մենք կարո՞ղ ենք հույս դնել ներգաղթի վրա, որպես դեմոգրաֆիան շտկելու միջոցի, թե՞ ոչ:

BookMark